

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇՈՒԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԴՐԱՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔ

ԱՆԴՐԱՆԻԿ ՄՆԱՑԱԿԱՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ, ՏԱԹԵՎԻԿ ՍԱՄՍՈՆԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ֆինանսական հաշվեկշիռը բնութագրում է միաժամանակ տնտեսական գնահատականը և տարբեր դասակարգումների մեթոդների կիրառումը:

Տնտեսական գնահատականի կիրառումը որոշվում է հետևյալ հիմնական վիճակներով.

- բոլոր ակտիվների և միջոցների աղբյուրների գրառումը հաշվեկշռի մեջ, որոնք կան ձեռնարկությունում իր գործունեության համար
- հրաժարում լիկվիդացիայից և ոչ նյութական ակտիվներից
- ակտիվների գնահատումը ըստ շուկայական գնահատականի:

Դիտարկենք տարբեր մեթոդների կիրառման դասակարգումը: Ինչպես արդեն նշվել է, դասակարգումը պետք է կատարվի ակտիվներից և պասիվներից ելնելով:

Ակտիվների մեջ կիրառվում է դասակարգումը ըստ գործառնությունների:¹

Պասիվների մեջ հարկ է կիրառել նախ դասակարգումը՝ ըստ իրավաբանական սկզբունքի դասակարգելով տողատակերը, որոնք թույլ են տալիս կարողալ հիմնական կապիտալի արժեքը:

¹ Հիմնական կապիտալը այնտեղ հանդես է գալիս ոչ թե հաշվեկշռային արժեքով, այլ շուկայական արժեքով:

Նշենք, որ խմբագրումների մասնավոր դեպքերը, որոնք թույլ են տալիս ստանալ ճիշտ ֆինանսական հաշվեկշիռ, հանդիսանում են շատ բարդ գործ անհրաժեշտ տեղեկատվության հաշվեկշռի ստացման համար: Վերլուծաբանի դերը, այսպիսով, կայանում է նրանում, որ հասնի հնարավոր առավելագույնին:

Ստորև կվերլուծենք այն, ինչը կապված է իրավաբանական կանոնակարգի հետ, հաշվապահական գնահատականը՝ կիրառելով հաշվեկշիռը Գլխավոր պլանի հաշիվների հետ և վերադասակարգելով նրա որոշ հոդվածներ:

Օրենսդրության փոփոխություններ առաջացնող հոդվածներ

Հայաստանի հաշվապահական հաշվեկշռի մեջ արտացոլված են ակտիվներ, որոնց տիրում է ձեռնարկությունը: Ֆինանսական հաշվեկշիռը իր հերթին պետք է հաշվի առնի բոլոր ակտիվները, որոնք ձեռնարկությանը թույլ են տալիս գործի դնելու ամեն ինչ՝ անկախ այդ ակտիվներին տիրելու բոլոր միջոցներից. այդ պատճառով էլ նպատակահարմար է որոշել ակտիվները և պասիվները: Այս խնդիրը վերաբերում է նախ և առաջ վարձակալած միջոցներին, հաշվարկային պարտատոմսերին, որոնց վճարման ժամկետը դեռ չի մոտեցել:

Վարձակալած ակտիվների հաշվարկ: Վարձակալած հիմնական միջոցների արժեքը հաշվի չի առնվում հաշվապահական հաշվեկշռի ակտիվների արժեքի մեջ, քանի որ ձեռնարկությունը այդ ունեցվածքի սեփականատերը չէ: Վարձակալած վճարի վճարները պարտքի դիմաց պասիվներում չի նշվում: Որպեսզի ձեռնարկության հաշվեկշռի մեջ ցույց տրվի տնտեսական իրավիճակը, անհրաժեշտ է հաշվապահական հաշվեկշիռը հագեցնել նաև երկու գործողություններով. վարձակալած միջոցների հաշվապահական մնացորդի ակտիվները, այսինքն՝ այն արժեքները, որոնք պետք է վճարվեին ղեկավարների կողմից գույքը ձեռք բերելիս՝ հաշվի առնելով կուտակված ամորտիզացիան, որը համապատասխանում է մաշ-

վածքին, և վարձակալողների գրառումները պարտքերի պասիվի մեջ, այսինքն՝ վարձակալած վճարը:

Այս երկու խմբագրումները ուղեկցվում են նախկին արդյունքների գնահատականով և ընթացիկ փուլի տվյալներով: Այս գործողությունները ստեղծում են զգալի տեխնիկական դժվարություններ:

Սովորաբար փոփոխությունները պետք է վերաբերեն բոլոր վարձակալված ակտիվներին: Փաստորեն, վերանայելով դիտարկվում են ընդամենը հիմնական միջոցները, որոնք ստացվում են լիզինգից, որն էլ համարվում է քննադատության առարկա:

Գնահատականի խմբագրում

Դիտարկենք վճարման հանձնարարականի գնահատականը արտարժույթով, նախապես բացահայտված ծախսերը, ամորտիզացիոն հատկացումները, պահուստները և պաշարները:

Վճարման պահանջագրերի գնահատումը և պարտքերը արտասահմանյան արտարժույթով:

Վճարման պահանջագրերը և պարտքերը արտասահմանյան արտարժույթով գնահատվում են Հայաստանի Հանրապետությունում՝ հաշվի առնելով արտարժույթի կուրսի փոփոխությունը՝ կախված ստեղծված իրավիճակից: Վճարման պահանջագրերը պոտենցիալ եկամտաբերության և պարտքերի դեպքում դիմում են արտարժույթի կուրսին, որը գոյություն ունի հաշվեկշիռը կազմելու օրը, իսկ հավանական շահույթը գրանցվում է հաշվեկշռի ստորին մասում՝ հաշվի առնելով պասիվի շեղումները:

Օրինակ, ունենք 200 դրամական միավորի արտասահմանյան արտարժույթի վճարման պահանջագիր: Ենթադրենք, թե արտարժույթի կուրսը տատանվում է 1-ից մինչև 1,5 միավոր: Համապատասխան հաշվեկշիռները կունենան հետևյալ տեսքը.

Վճարման պահանջագրերի հաշվառման ժամանակ կազմված հաշվեկշիռ

Ակտիվ Պասիվ

Վճարման պահանջագիր 200 կապիտալ 200

Վերջնական հաշվեկշիռ

Ակտիվ Պասիվ

Վճարման պահանջագիր 300 կապիտալ 200

Կուրսի շեղումներ՝ 100:

Այս փորձը նպատակ ունի ծանոթացնել գոյություն ունեցած հնարավոր եկամտի հետ արտարժույթի կուրսի տատանումների դեպքում: Քանի որ նախատեսվում է որոշել միայն ձեռնարկության գործունեության ցուցանիշները, գերադասելի է բացառել կուրսային տարբերությունների ազդեցությունը և առկա շահույթի գոյությունը, հակառակը, կարող է նշվել այն հաշվարկային փաստաթղթերում:

Կուրսի տարբերության դեպքում վնասը կլինի մի քիչ բարդ. վնասները պետք է ոչ միայն ներառվեն ակտիվների հաշվարկներում, այլև նշվեն ծախսերի մեջ դրտացիաների միջոցով՝ ռիսկի դեպքում:

Կրկին վերադառնանք նախկին օրինակին. ենթադրենք, թե փոխանակման կուրսը հաշվեկշիռը կազմելու օրը նվազել է մեկ օրվա մեջ 0,8-ով.

Վճարման պահանջագրերի հաշվառման ժամանակ կազմված հաշվեկշիռ

Ակտիվ

Պասիվ

Վճարման պահանջագիր 200

Կապիտալ 200

Վերջնական հաշվեկշիռ

Ակտիվ	Պասիվ
<p>Վճարման պահանջագիր 160 Արտարժույթի շեղումներ 40 : 200</p>	<p>Կապիտալ 200 Կորուստներ (40) Պաշարներ ռիսկի դեպքում 40 : 200</p>

Եթե վերլուծաբանը հրաժարվում է հաշվի առնել հաշվարկային տարրերը, ապա անհրաժեշտ է բացառել արտարժույթի կուրսի տատանման բոլոր տարբերակները:

Ծախսերի նախապես բացահայտումը իրենից ներկայացնում է ակտիվների հոդվածները ըստ ծախսերի ընթացիկ կառավարման, որոնք դեռևս չեն օգտագործվել, սակայն կծախսվեն տվյալ փուլում:

Որոշ վերլուծաբաններ տարբերում են նախապես բացահայտված ծախսերը, որոնք ներկայացնում են իրենցից միջոցներ և ծախսեր, որոնք էլ գրկված են նյութական ծառայությունների մատուցումից: Տվյալ տարբերակումը մեզ թվում է վիճարկելի՝ ելնելով մեզանում բերված փաստարկներից ոչ նյութական ակտիվների մասին: Ակտիվները թողնելով ծախսերի մեջ՝ մենք հետագայում այն կդասակարգենք:

Ամորտիզացիոն հատկացումները և պաշարները ձևավորվում են ըստ ուղղությունների, որոնք թվարկում են ֆինանսական վերլուծաբանները: Երբ հանդես է գալիս համապատասխան հնարավորություն, իրականացվում է խմբագրում, առանձին դեպքերում որոշ վերլուծաբաններ ամբողջությամբ բացառում են պաշարների ազդեցությունը, որը որ մենք արդեն առաջարկել ենք:

Պաշարների գնահատականը իրականացվում է հաշվապահությունում՝ ելնելով զգուշավորության սկզբունքից, նկատի ունենալով բոլոր հնարավոր կորուստները, սակայն դրանով հանդերձ հաշվի չի առնվում հավանական շահույթը:

Հաշվարկի այդպիսի սկզբունքը սահմանափակում է ֆինանսական վերլուծաբանին, որը և ներկայացվել է մեզանում: Եթե պաշարները և նրանց տատանումները նկատելի են, ապա վերլուծաբանը գնահատում է պաշարները ըստ իրացման գնի: Հակառակ դեպքում անհրաժեշտ է բացառել պաշարները:

Հողվածների վերախմբավորում

Որոշ միջոցներ կարող են ճիշտ գնահատվել և հանդես գալ հաշվեկշռի մեջ, բայց չբավարարել խմբավորումների այն չափանիշները, որոնք ընդունվել են ֆինանսական վերլուծության մշակման ժամանակ:

Հետևաբար, հարկավոր է վերախմբավորել, որը վերաբերում է ակտիվների և պասիվների հողվածներին:

Ակտիվների հողվածների վերախմբավորում

Հիմնադիր կապիտալը և չվճարված բաժնետիրական գրանցված կապիտալ:

Այս հողվածները իրենցից ներկայացնում են մասնակիցների վճարման պահանջագրեր, որոնք չեն վճարել կապիտալի մի մասը: Ֆինանսական վերլուծաբանը իր հերթին հետաքրքրվում է նաև վճարված կապիտալի ճշգրիտ ծավալով, որը և մասնակիցների բաժնենմասն է: Այսպիսով, մեր կարծիքով, չվճարված կապիտալի գումարը պետք է դուրս հանվի պասիվներից:

Ծախսերը, որոնք բացահայտվել են նախկինում, իրենցից ներկայացնում են հիմնականում ծառայությունների մի խումբ: Կախված նրանից, թե ուր են ուղղված պաշարները՝ ներդրումների կատարմանը, թե արտադրության իրականացմանը, նրանք պետք է ներառվեն կա՛ն հիմնական կապիտալի մեջ, կա՛ն շրջանառու ակտիվների մեջ: Հիմնականում պաշարները վերաբերում են արտադրությանը:

Մի քանի փուլերի ծախսերը, ի տարբերություն նախորդ փուլերի ծախսերի, իրենցից ներկայացնում են ներդրումային բնույթի ծառայություններ:

Նրանք պետք է ներառվեն նյութական և ոչ նյութական համապատասխան հիմնական բաժինների մեջ:

Պասիվների հողվածների վերախմբավորում

Մասնակիցների ընթացիկ հաշիվներ: Մասնակիցները կարող են քննարկել ձեռնարկության դրամական միջոցները և ստանալ տոկոսներ՝ ի նշան պարզևատրության: Այդ վճարները ձևավորվում են հաշվապահական հաշվեկշռի մեջ ֆինանսական պարտքերի հողվածում, սակայն որպեսզի ունենան լիարժեք պատկերացում սեփականատերերի հարստության մասին, նրանք պետք է միավորվեն և ներառվեն սեփական կապիտալի մեջ: Որոշ վերլուծաբաններ առաջարկում են ներառել միայն ընթացիկ հաշիվների փակ գումարները, իսկ ընթացիկ հաշիվների մյուս գումարները թողնել պարտավորությունների հողվածի մեջ: Ըստ մեր կարծիքի՝ հարկավոր է այն առանձին հողվածով տեղադրել իրենց սեփական կապիտալի մեջ:

Ընկերությունների փոխատվությունը: Եթե ինչ-որ մասնաճյուղի շահութաբերությունը իրականացվում է ընկերության ֆինանսական հաշվետվության համար, ապա ֆինանսական պարտավորությունները ընկերության նկատմամբ պետք է ներառվեն սեփական կապիտալի մեջ, որպեսզի ներկայացնեն իրենց սեփական ներդրումային գումարը՝ անկախ նրա ձևերից:

Փոխարկելի մուրհակները համապատասխանում են բաժնետոմսերին, որոնք կարող են փոխարկվել ակցիաների: Որոշ վերլուծաբաններ առաջարկում են դրանք ներառել սեփական կապիտալի մեջ, երբ այդպիսի փոխարկումը հնարավոր է, այսինքն բաժնետոմսի արժեքը ավելին է, հակառակ դեպքում նրանք թողնում են ֆինանսական պարտքերի մեջ:

Ներդրումային դոտացիաները իրենցից ներկայացնում են ֆոնդեր, որոնք վճարվում են պետության կողմից կամ էլ հասարակական կազմակերպությունների կողմից, հիմնական կապիտալի մեջ ներդրումներ կատարելու համար: Այս դոտացիաները, որոնք գրառվում են հաշվապահական հաշվեկշռի մեջ, դիտարկվում են ամբողջ ծավալով որպես սեփական կապիտալ, քանի որ աստիճանաբար ներդրվում են արտադրութ-

յան մեջ՝ ենթարկվելով հարկային դաշտի օրենքներին: Սովորաբար դոտացիաների մի մասը, որը հավասար է հարկերին, պետք է հարկվի պարտքերի պարտավորությունների մեջ: Միայն շահույթը կարող է երևալ սեփական կապիտալի մեջ:

Պաշարները նախատեսված չեն ծածկելու կոնկրետ ռիսկերի վնասները: Դա վերաբերում է սեփական միջոցներին, երբ բարձրանան գները և տատանվեն փոխանակման կուրսերը, կամ էլ շահույթի կուտակում լինի: Որոշ դեպքերում, սակայն, պաշարները մեծ ռիսկերի դեպքում, կարող են ծառայել որպես ծախսաձածկում: Քանի որ այդ գործողությունները ազատված չեն հարկերից, այն հարկավոր է ներառել հարկային պարտքային պարտավորությունների մեջ:

Պահուստները նախատեսված են ծածկելու որոշ տեսակի ռիսկեր և որոշ հավանական հետագա ծախսեր: Նրանք դիտարկվում են որպես հաշիվներ շահույթից և ընդհանուր ոչինչ չունեն պարտավորությունների կապիտալի հետ: Մեր կարծիքով, հենց սեփական կապիտալը պետք է ընդունվի հաշվարկելու եկամուտների տոկոսները: Այս դեպքում պահուստային հոդվածը և ծախսերը կներառվեն պահուստների հոդվածի մեջ որպես սեփական կապիտալ:

Պարտքային պարտավորություններ:

Հիշեցնենք, որ պարտքային պարտավորությունները պետք է բաշխվեն երկարաժամկետի և կարճաժամկետի: Հարկ է նշել, որ դժվար է լինում տարբերակել հենց պարտավորությունների գումարը և տոկոսների պարտավորությունները: Այդ պատճառով էլ գուրմարը նպատակահարմար է հաշվի առնել երկու հոդվածներով:

Հաշիվներ, որոնք կարգավորում են պասիվների հոդվածները, կազմված են այն եկամուտներից, որոնք համապատասխանում են գլխավորապես այն միջոցներին, որոնք ստացվում են հաճախորդներից, այն ժամանակ, երբ համապատասխան ծառայությունները և ապրանքները չեն իրացվել: Տնտեսագիտորեն այս եկամուտները, որոնք ստացվել են նախկինում, հավասարվում են վարկերին, որոնք տրվում են հաճախորդներին:

Հետևաբար, որոշակի է դառնում դրանք թողնել երկարաժամկետ կամ կարճաժամկետ շահագործման մեջ՝ կախված նրանից, թե որքան ժամանակ կիրականացվեն այդ ծառայությունները:

Շահույթը որոշակի ժամկետում տանում է սեփական կապիտալի: Այնուամենայնիվ, նրա այն մասը, որը բաշխվում է շահաբաժնի ձևով և դառնում է կարճաժամկետ պարտավորություն, առանձնացնենք Գլխավոր պլանի հաշիվների առանձին հոդվածով:

Ֆինանսական պլանի հնարավոր բարելավումները և սահմանները

Մեզանում նշված ֆինանսական հաշվեկշիռը մնում է զգալիորեն կախված հաշվապահական հաշիվներից:

Ֆինանսական վերլուծաբանը իր գործառույթները կատարելու համար պետք է նաև կիրառի հաշիվներ և վերլուծական հաշվեկշիռներ. երկարաժամկետ և կարճաժամկետ հաշվեկշռային հաշիվներ ըստ պլանի և բյուջեի, վերլուծական հաշվեկշիռներ ըստ գործունեության ճյուղերի և ըստ աշխարհագրական տեղանքի.

Ֆինանսական հաշվեկշիռ

Կապիտալ ներդրումներ Ոչ նյութական ակտիվներ

Ծախսեր ըստ հարմարանքների
ծախսեր ըստ
հետազոտությունների և
զարգացման
պատենտներ, թույլատրագրեր,
նամականիշեր
առևտրային հիմնադրամ և այլ
հիմնադրամներ

Սեփական կապիտալներ Երկարաժամկետ և կարճաժամկետ կապիտալներ

Էմիսիոն հավելավճարներ,
հիմնադրամի հավելավճար
շեղումներ պաշարները
գերազնահատելիս
մնացորդային
եկամուտների հաշիվներ և
կորուստներ

Կանխավճարներ և
անդամավճարներ
Մի քանի փուլերի ծախսեր
Նախապես բացահայտված
ծախսեր
Նյութական
ակտիվներ/հիմնական
կապիտալ/
Հողային տարածքներ
Սարքավորումներ
Տեխնիկական միջոցներ,
մեքենաներ, սարքեր
Այլ
Ընթացիկ կապիտալ
ներդրումներ
Կանխավճարներ և
անդամավճարներ
Երկարաժամկետ վարկեր և
ներդրումներ
Մասնակցություն ներդրումների
մեջ
Պարտքային
պարտավորություններ ըստ
ներդրումների մասնակցության
Այլ երկարաժամկետ
ներդրումներ
Մուրհակներ
Շրջանառու կապիտալ
Արտադրություն
Ընթացիկ ապրանքա-
նյութական պաշարներ
Կանխավճարներ և
անդամավճարներ ըստ
պատվերի

Ներդրումային
դոտացիաներ
Մասնակիցների ընթացիկ
հաշիվներ
Ռ-իսկի դեպքում պաշարներ
և ծախսեր
Կարճաժամկետ
Ընթացիկ հաշիվներ
Ռ-իսկի դեպքում պաշարներ
և շահույթ
Գումարի ժամանակավոր
փոխադրման փուլ
Ժամանակի շահույթ
Վարձու կապիտալ
Երկարաժամկետ և միջին
ժամկետ
Փոխանակվող
պարտատոմս
Այլ փոխանակվող
պարտատոմսեր
Մուրհակներ և վարկեր
վարկային
կազմակերպություններին
Այլ ֆինանսական
պարտքեր միջին և
երկարաժամկետ
Այլ պարտքեր միջին և
երկարաժամկետ փուլով
Կարճաժամկետ
շահագործվող պարտքեր
Կանխավճարներ և
մուծումներ, ստացված
ընթացիկ պատվերներից
Ներկրողների պարտքեր

Շահագործվող պարտքեր
Դեբիտորական պարտքեր
Նախապես բացահայտված
ծախսեր

Արտասարտադրական

Տարբեր վճարային
պարտավորություններ

Դրամական միջոցներ

Արժեթղթեր

Դրամարկդ, կանխիկ

Հարկային և

հասարակական պարտքեր

Նախապես բացահայտված

եկամուտներ

Շահագործումից դուրս

պարտքեր

Հիմնական միջոցներ

Ֆիսկալային պարտքեր

Այլ

Առանցքային հասկացություններ. Ֆինանսական հաշվեկշիռ, ակտիվներ, պասիվներ, արտարժույթի կուրսի տատանումներ, ծախսերի, ամորտիզացիոն հատկացումներ, պաշարներ, պաշարների գնահատում, մասնակիցների ընթացիկ հաշիվներ, ներդրումային դոտացիաներ, մուրհակներ, պահուստներ, պարտքային պարտավորություններ, շահույթ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բայադյան Ա., Ձեռնարկությունների ֆինանսական դրոշյան գնահատումը, Երևան, 2002թ.:
2. Խաչատրյան Հ., Ֆինանսական և կառավարչական հաշվապահական հաշվառման ուսումնամեթոդական և կիրառական ձեռնարկությունների ժողովածու, Երևան, 1977թ.:
3. Հայաստանի հաշվապահության հաշվառման ստանդարտներ, Երևան, 1999թ.:
4. Ձեռնարկության արդյունավետ կառավարում/գործարար խաղի մեթոդիկա/, պրոֆ. Յու Մ.Սուվարյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան, 2001թ.:
5. Մարկոսյան Ա., Պետությունը և շուկան, գիրք առաջին, Երևան, 2000թ.:
6. Ջեյմս Դ.Գ., Ռիչարդ Լ.Խ., Տնտեսագիտություն/ գլխավոր խմբագիր՝ պրոֆ. Գ. Կիրակոսյան/, Երևան 1999թ.:

А.М.Аветисян, Т.С.Багдасарян
**Совершенствование финансового баланса как
современное орудие управления финансовыми средствами**

Резюме

Статья представляет собой поправки, образующие изменения в законодательстве, составление баланса во время учёта требований платежа и перегруппировку статей актива и пассива, также возможное улучшение финансового плана.

***Ключевые понятия:** Финансовый отчет, активы, пассивы, колебание валюты, расходы, амортизация, запасы, оценка запасов, текущие расходы участников, инвестирование дотации, краткосрочная трата, резервы, денежный долг, прибыль.*

А.М.Avetisyan, T.S.Baghdasaryan
**Financial statement improvement as a modernization tool of
cash flow managment**

Summary

The article deals with the refinements which evoke legislative changes, as well as balance sheets formed during accounting payment receipts. It also touches upon the regrouping of asset and credit articles and possible improvement and borders of a financial plan.

***Key concepts:** Financial Statements, assets, liabilities, currency fluctuation, expenses, depreciation's allocation, stock, stock valuation, stakeholder's current accounts, investment subsidies, bills, reserves, depths, profit.*